Տարածաշրջան

2015Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Հայկ Գաբրիելյան[*]

2015թ. նոյեմբերի 1-ին Թուրքիայում անցկացվեցին խորհրդարանական կրկնական ընտրություններ, որոնց անհրաժեշտությունը ծագել էր այն բանից հետո, երբ հունիսի 7-ին Թուրքիայում անցկացված խորհրդարանական ընտրությունների արդյունքներով քաղաքական որևէ ուժի չհաջողվեց ստանալ միակուսակցական կառավարություն, և խորհրդարան անցած ուժերը չկարողացան ձևավորել կոալիցիոն կառավարություն: Արդյունքում՝ Թուրքիայի Հանրապետությունն իր պատմության մեջ առաջին անգամ ունեցավ ժամանակավոր կառավարություն, և նոյեմբերի 1-ին նշանակվեցին նոր ընտրություններ: *Աղյուսակ 1*-ում ներկայացվում են հունիսի 7-ի և նոյեմբերի 1-ի ընտրությունների հիմնական ցուցանիշները.

Աղյուսակ 1

	07.06	01.11[1]
Ընտրողներ	56.608.817	56.965.099
Օգտագործված քվեներ	47.507.467	48.523.610
Վավեր քվեներ	46.163.243	47.838.711
Անվավեր քվեներ	1.344.224	684.899
Մասնակցություն (%)	83.92	85.18

Փաստորեն, հունիսի 7-ի ընտրություններին հաջորդած 146 օրվա ընթացքում ընտրելու իրավունք ունեցողների թիվն աճել է մոտ 350.000-ով, և այս անգամ ընտրություններին մասնակցելու ցուցանիշը եղել է մի փոքր ավելի բարձր: Նոյեմբերի 1-ի ընտրություններին մասնակցել է 16 կուսակցություն, հիմնական դերակատարները մնացել են նույնը, և խորհրդարանում վերստին հայտնվել են նույն ուժերը:

[*] Թուրքագետ:

[1] Հունիսի 7-ի ընտրությունների արդյունքները պաշտոնական, իսկ նոյեմբերի 1-ինը՝ նախնական տվյալներ են:

Արդարություն և զարգացում կուսակցություն (ԱԶԿ) – Ներկայացնենք 2015թ. Թուրքիայում անցկացված խորհրդարանական երկու ընտրություններում ԱԶԿ համեմատական արդյունքները (տե՛ս *Աղյուսակ 2*).

Աղյուսակ 2

ԱԶԿ	07.06	01.11
Ստացած քվեներ	18.867.411	23.673.541
Ողջ քվեներում մասնաբաժին (%)	40.87	49.49
Պատգամավորական մանդատներ	258	317
Հաղթած նահանգներ	56	63
Պատգամավոր չստացած նահանգներ	5	3
Բոլոր մանդատները ստացած նահանգներ	4	17

Այդպիսով, ԱԶԿ-ն նոր ընտրությունների արդյունքներով ստացել է 59 մանդատ ավելի, որոնցից 4-ը խլել է Ժողովրդա-հանրապետական կուսակցությունից (ԺՀԿ), 37-ը՝ Ազգայնական շարժում կուսակցությունից (ԱՇԿ), 18-ը՝ քրդամետ Ժողովուրդների դեմոկրատական կուսակցությունից (ԺԴԿ)[2]: ԱԶԿ-ն մանդատների հարցում ամենամեծ առաջընթացն ունեցել է Ստամբուլի նահանգում (39-ից հասել է 46-ի, մոտ 1 մլն քվե ավելի), իսկ տոկոսային հարաբերակցությամբ՝ Իգդիրում (11.73%-ից 31.65%-ի): ԱԶԿ-ն իր պատգամավորների թիվը պահպանել է 33 և ավելացրել է 48 նահանգում և ոչ մի նահանգում հետընթաց չի ունեցել այդ առումով: ԱԶԿ կին պատգամավորների թիվը 41-ից նվազել է 35-ի:

ԱԶԿ-ի կողմից ավելի քան 23.5 մլն քվե ստանալու հետ կապված՝ թուրքական մամուլը գրեց, որ ԱԶԿ նախագահ, երկրի վարչապետ Ահմեթ Դավութօղլուն գերազանցել է երկրի ներկայիս նախագահ Ռեջեփ Էրդողանի ռեկորդը, որի գլխավորած ԱԶԿ-ն 2011թ. ընտրություններում ստացել էր 2 մլն քվե պակաս[3]: Բացի այդ, ԱԶԿ-ն 4 անգամ անընդմեջ միակուսակցական կառավարություն ստանալու ցուցանիշով գերազանցեց Ադնան Մենդերեսի Դեմոկրատական կուսակցության ռեկորդը, որին առաջինն էր հաջողվել 3 անգամ անընդմեջ (1950-1960թթ.) հասնել նման արդյունքի[4]: Նոյեմբերի 3-ին Դավութօղ-

[2] AK Parti HDP ve MHP'den 55 milletvekili aldı, Yeni Şafak, 03.11.2015.
[3] Davutoğlu, Erdoğan'ın Oy Rekorunu Tarihe Gömdü, Haberler.com, 01.11.2015.
[4] AK Parti, DP ve Menderes'in rekorunu kırdı, Sabah, 02.11.2015.

լուն հայտարարեց, որ ԱԶԿ-ն իշխանության է եկել 2002թ. նոյեմբերի 3-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքներով, և որ դրան հաջորդած 13 տարում ԱԶԿ-ն հաղթել է խորհրդարանական բոլոր ընտրություններում, ինչն աննախադեպ է ժողովրդավարության համաշխարհային պատմության մեջ[5]:

Փաստորեն ԱԶԿ-ն 5 ամսում իր քվեների թիվն ավելացրել է մոտ 5 մլն-ով (9%-ով) և ստացել է ավելի քան 23.5 մլն քվե, ինչի շնորհիվ այս անգամ լուծեց միակուսակցական կառավարություն ստանալու խնդիրը, որի համար պահանջվում էր 276 (50%+1) մանդատ: Ընտրություններն ի ցույց դրեցին, որ արդյունքների կանխատեսման հարցում սխալվել են Թուրքիայի գրեթե բոլոր առաջատար հետազոտական կազմակերպությունները[6], ինչի մասին վկայում է *Աղյուսակ 3*-ը.

Աղյուսակ 3

	ԱԶԿ	ԺՀԿ	ԱՇԿ	ԺԴԿ	Մյուսներ
Sonar	40.5	27.3	15.2	13.1	3.9
ORC	43.3	27.4	14.0	12.2	3.1
Metropoll	43.3	26.9	14.8	13.4	1.6
Gezici	43.0	26.1	14.9	12.2	3.8
A&G	47.2	25.3	13.5	12.2	1.8
Konda	41.7	27.9	14.2	13.8	2.4
MAK	44.2	27.2	13.6	12.2	2.8
Andy-AR	43.7	27.1	14.0	13.0	2.2

Չնայած քվեների մոտ կեսը հավաքելուն՝ ԱԶԿ-ն չկարողացավ հասնել իր գլխավոր նպատակին՝ խորհրդարանում առնվազն 330 մանդատ (խորհրդարանի 3/5) ստանալուն, ինչը նրան հնարավորություն կտա հանրաքվեի դնել նոր սահմանադրության նախագիծը, որով Թուրքիան անցում կկատարի կառավարման նախագահական համակարգի («Մեկ մարդու ռեժիմի»): Հայտնի է, որ Էրդողանն ամեն գնով ցանկանում է հասնել դրան՝ իր լիազորություններն ընդլայնելու համար: Կարելի է կարծել, որ նոր ընտրություններում ԱԶԿ հիմնական նպատակը եղել է հենց 330 մանդատ ստանալը և ոչ թե պարզապես միակուսակցական կառավարություն ստանալը: ԱԶԿ-ի համար սարսա-

[5] Başbakan Davutoğlu, Atatürk Havalimanı'nda vatandaşlara seslendi, Anadolu Ajansı, 03.11.2015.
[6] Anket şirketleri 1 Kasım seçimlerinde yanıldı, Haber Turk, 01.11.2015.

փելի չէր լինի ընդդիմությանը մի քանի ոչ առանցքային նախարարություն հանձնելը: Եվ չնայած ԱԶԿ-ն այս անգամ չհասավ 330 մանդատին՝ այնուամենայնիվ, բավական մոտեցավ դրան, և այժմ կարող է այլ կուսակցություններից մոտ 15 աջակից գտնելու դեպքում հասնել իր նպատակին. քրդամետ ԺԴԿ երկու պատգամավորներ հայտարարել են, որ պատրաստ են աջակցել կառավարման նախագահական համակարգին անցում կատարելուն, եթե այն լինի ԱՄՆ կամ Մեքսիկայի նախագահական համակարգի նման[7]:

Իսկ ինչպե՞ս ԱԶԿ-ին հաջողվեց նման կարճ ժամանակահատվածում այդչափ բարելավել սեփական ցուցանիշը: Դա ունի բազում պատճառներ: Ինչպես նոյեմբերի 1-ի ընտրություններից հետո հայտարարեցին Էրդողանն ու Դավութօղլուն, ժողովուրդը քվեարկել է կայունության օգտին, որ նա հոգնել էր ԱԶԿ միակուսակցական կառավարություն չստանալու ժամանակ երկրում տիրող անկայուն վիճակից: Բնականաբար, ընտրազանգվածի մի զգալի հատվածը տուրք է տվել ԱԶԿ (Էրդողան) առաջ քաշած «կա՛մ մենք, կա՛մ քաոս» թեզին: Շատերի մեջ դեռ թարմ է հիշողությունը, որ նախկինում Թուրքիան կոալիցիոն կառավարություններ ունենալիս բախվել է լուրջ խնդիրների՝ ներքաղաքական անկայունություն, անվտանգության հետ կապված խնդիրներ, տնտեսական խնդիրներ, ռազմական հեղաշրջումներ:

Եվ այնուամենայնիվ, զարմանալի է, որ ընտրազանգվածի տվյալ հատվածը հավատացել է, որ եթե ԱԶԿ-ն ունենա միակուսակցական կառավարություն, ապա երկրում կտիրի կայունություն: Հունիսի 7-ի ընտրություններից հետո որպես կայունության խախտման ցուցիչներ նշվում էին Քրդստանի աշխատավորական կուսակցության (*PKK*) հետ բախումները, Սուրուչի և Անկարայի պայթյունները, Թուրքիայի տնտեսական խնդիրները: *PKK*-ի հետ բախումների մասով թուրք ընտրողը պետք է որ տեղյակ լիներ, որ Թուրքիայի իշխանություններն իրենք են հունիսյան ընտրություններից հետո խախտել հրադադարը և սկսել ավիահարվածներ հասցնել Հյուսիսային Իրաքում գտնվող *PKK*-ի օբյեկտներին: Բացի այդ, նախկինում, երբ ԱԶԿ-ն Թուրքիայում մշտապես ունեցել է միակուսակցական կառավարություն, *PKK*-ի հետ նույնպես գրանցվել են թեժ բախումներ, ինչը բացառում է այն տարբերակը, որ ԱԶԿ միակուսակցական կառավարություն ունենալը Թուրքիային ազատում է *PKK*-ի հետ բախումների հավանականությունից: *PKK*-ն արդեն հայտարարել է

[7] HDP'li iki isimden Erdoğan'a destek, Akşam, 05.11.2015.

ընտրություններից առաջ իր հայտարարած միակողմանի հրադադարի ժամկետի ավարտի մասին, և Թուրքիայում վերսկսվել են բախումները:

Ինչ վերաբերում է Սուրուչի և Անկարայի պայթյուններին, ապա պաշտոնական վարկածը դրանց կազմակերպումն ու իրականացումը վերագրում է «Իսլամական պետությանը» (ԻՊ): Եթե անգամ ընդունենք, որ Թուրքիայի իշխանությունները ոչ մի կերպ կապված չեն դրանց կազմակերպման հետ (ինչի համար նրան մեղադրում է ընդդիմությունը), և որ դրանք իսկապես կազմակերպել է ԻՊ-ը, ապա ո՞վ կարող է երաշխիք տալ, որ եթե ԱԶԿ-ն ունենա միակուսակցական կառավարություն, ապա ԻՊ-ը նոր պայթյուններ չի կազմակերպի Թուրքիայի տարածքում: Պայթյունների հավանականությունը կտրուկ կաճի, եթե երկիրն սկսի ակտիվ պայքար մղել ԻՊ-ի դեմ, ինչի մասին վերջին շրջանում շատ է խոսվում այստեղ:

Եվ վերջապես, Թուրքիայի ներկայիս տնտեսական խնդիրները (լիրայի արժեզրկում, արտահանման նվազում, գործազրկության աճ և այլն) չեն սկսվել հունիսի 7-ից հետո, և դրանց պատճառն ամենևին էլ այն չէ, որ ԱԶԿ-ն դրանց արդյունքներով չի ստացել միակուսակցական կառավարություն: Ըստ էության՝ ընտրազանգվածի տվյալ մասով տեղի է ունեցել անտրամաբանական գործընթաց, քանի որ անկայունության այս երեք հիմնական խնդիրների համար մեղավոր և պատասխանատու են առաջին հերթին Թուրքիայի իշխանությունները և ոչ թե ընդդիմությունը: Հենց իշխանություններն ավարտին չհասցրին քրդերի հետ կարգավորման գործընթացը և վերսկսեցին ռազմական գործողությունները, հենց իշխանություններն են պատասխանատու երկրում խոշորամասշտաբ ահաբեկչությունները բացահայտելու և կանխելու, ինչպես նաև երկրի տնտեսական խնդիրները լուծելու համար: Տրամաբանությունը հուշում է, որ Թուրքիայում տվյալ խնդիրների առկայությունը պետք է նվազեցներ և ոչ թե մեծացներ ԱԶԿ-ին աջակցելը:

ԱԶԿ ղեկավարությունը, թերևս, շատ ավելի լավ էր ճանաչում ընտրազանգվածի այդ հատվածին, ինչի համար էլ որոշեց գնալ կրկնական ընտրությունների, և եթե այդ 5 ամիսներին երկրում լուրջ իրադարձություններ չկատարվեին, ապա նոր ընտրությունների արդյունքները հազիվ թե լրջորեն կտարբերվեին նախորդ ընտրությունների արդյունքներից: Մյուս կողմից էլ, ինչպես գրում է թուրքական մամուլը, ահաբեկչական այդ պայթյուններից հե-

տո ընդդիմությունը (ԺԴԿ) վախենում էր կազմակերպել նախընտրական խոշոր միջոցառումներ, ինչը վնասել է նրա նախընտրական քարոզարշավին:

ԱԶԿ վարկանիշի բարձրացման համար լուրջ հաղթանակներ չկան նաև արտաքին քաղաքական դաշտում: Ընդհակառակը, կան գործոններ, որոնք կարող էին ստվեր նետել Թուրքիայի իշխանությունների վրա. Սիրիայի քրդերը նորանոր հաջողություններ են գրանցում և հայտարարել են նոր կանտոնի (շրջանի) ստեղծման մասին, ինչը հարուցել է Թուրքիայի զայրույթը և անգամ նրանց հարվածելուն: Կարելի է հիշատակել նաև Սիրիայում գործող ռուսական ինքնաթիռների կողմից երկրի օդային տիրույթի խախտումները: Թուրքիան նաև դժգոհել էր, որ ԱՄՆ-ը ռազմական օգնություն է ցուցաբերում Սիրիայի քրդերին և հրաժարվել է սիրիական չափավոր ընդդիմությանը ռազմական ուսուցում տալու և սպառազինելու ծրագրից, որն իրագործվում էր նաև Թուրքիայի տարածքում: Թուրքիան քիչ թե շատ հաջողության հասել է ԵՄ-ի հետ շփումների ակտիվացման հարցում՝ կապված փախստականների ճգնաժամի կարգավորման հետ: Թեպետ դեռ կոնկրետ արդյունքներ չկան, սակայն ԵՄ-ը մի շարք խոստումներ է տվել՝ միայն թե Թուրքիան փախստականներին պահի իր մոտ:

Այս ամենը նշանակում է, որ ավելի ճիշտ կլինի ասել, որ ընտրազանգվածն առաջին հերթին քվեարկել է ոչ թե ԱԶԿ օգտին, այլ՝ ընդդիմության դեմ: Հունիսի 7-ի ընտրությունների արդյունքներով ընդդիմությունը ստացավ քվեների մոտ 60%-ը (292 մանդատ), ինչը եզակի հնարավորություն բացեց նրա առջև, սակայն այն չօգտագործեց իր հնարավորությունը և պատժվեց ժողովրդի կողմից: Ինչպես հայտարարել է Դավութօղլուն, ընդդիմության վրա բացասականորեն ազդեց այն, որ հիմնականում բոյկոտեց ժամանակավոր կառավարության աշխատանքները: Հունիսի 7-ի ընտրությունների արդյունքներով ժողովրդից դաս ստացած ԱԶԿ-ն անցավ եռանդուն քայլերի, իսկ ընդդիմությունը կարծես թե արբեց այդ հաջողությունից և թուլացրեց զգոնությունը: Բացի այդ, ընտրողներին շարունակ հուզում էր, թե ինչ է լինելու, եթե նոյեմբերյան ընտրություններն արդյունքներով չտարբերվեն հունիսյան ընտրություններից: Անորոշությունից ձերբազատվելու մղումը նույնպես խաղացել է ԱԶԿ օգտին: Ինչպես նկատել է ԱՇԿ նախագահ Դևլեթ Բահչելին, 20 ամսում 4 ընտրություն անցկացնելը բեռ է երկրի համար և ձանձրալի է բնակիչների համար[8]:

[8] 20 aylık bir sürede 4. seçimi yaşıyoruz, Yeni Çağ, 23.10.2015.

Բնականաբար, ԱԶԿ ստացած քվեների մեծացման հարցում իրենց կնիքը թողեցին նաև իշխանական ռեսուրսների օգտագործումը, անհավասար նախընտրական կամպանիան, ԶԼՄ-ի և ընդդիմության վրա գործադրված ճնշումներն ու բռնությունները, հնարավոր ընտրակեղծիքները՝ կապված ընտրությունների օրերին բնորոշ դարձած հոսանքազրկումների հետ: Նոյեմբերի 1-ի ընտրություններից առաջ ԺԴԿ անդամ Էրսին Օնգելը հայտարարեց, որ ԱԶԿ ներկայացուցիչները 37 անգամ հյուրընկալվել են *TRT* պետական հեռուստառադիոընկերության հատուկ հաղորդումներում, որոնք տևել են 25 ժամ, մինչդեռ ԺԴԿ, ԺՀԿ ու ԱՇԿ ներկայացուցիչներից որևէ մեկը չի ստացել նման հրավեր[9]:

Չպետք է մոռանալ նաև, որ ԱԶԿ-ն հունիսի 7-ի ընտրություններում 18 նահանգում շատ փոքր տարբերությամբ է զիջել մրցակիցներին և եթե նա դրանցում հավաքեր 90.340 քվե ավելի, ապա կստանար հավելյալ 18 մանդատ՝ միակուսակցական կառավարություն[10]: Փաստորեն նոյեմբերի 1-ի ընտրությունները հերթական անգամ ցույց տվեցին, որ վերջին շրջանում ԱԶԿ գործած ամենատարբեր տիպի բացասական քայլերը (կոռուպցիոն գործունեություն, խոսքի ազատության ճնշումներ, սեփական շահերի՝ պետական շահերից վեր դասում, Էրդողանի անձնական քմահաճույքով «Աք սարայ» նախագահական թանկարժեք նստավայրի կառուցում և այլն) գրեթե ոչ մի կերպ չեն ազդում նրա վարկանիշի և ցուցանիշների վրա:

Ժողովրդա-հանրապետական կուսակցություն (ԺՀԿ) – 2015թ. Թուրքիայում անցկացված խորհրդարանական երկու ընտրություններում ԺՀԿ համեմատական արդյունքները (տե՛ս *Աղյուսակ 4*).

Աղյուսակ 4

ԺՀԿ	07.06	01.11
Ստացած քվեներ	11.518.139	12.109.985
Ողջ քվեներում մասնաբաժին (%)	24.95	25.31
Պատգամավորական մանդատներ	132	134
Հաղթած նահանգներ	10	6
Պատգամավոր չստացած նահանգներ	37	35

[9] TRT'de konuk dağılımı: AKP 37, CHP, HDP ve MHP 0, Radikal, 30.10.2015.
[10] 276 milletvekili için 90 bin oy stratejisi, Sabah, 31.08.2015.

Այս արդյունքները վկայում են, որ ԺՀԿ-ն նոյեմբերի 1-ի ընտրությունների արդյունքներով մոտ 600.000-ով ավելացրել է իր քվեները, հատել է 12 մլն-ի հոգեբանական շեմը և ստացել 2 պատգամավորական մանդատ ավելի: ԺՀԿ-ն, փաստորեն, այս անգամ էլ ունեցավ վերջին շրջանում իր համար ավանդական դարձած 25%-ի ցուցանիշը, ինչը վկայում է, որ կուսակցությունը դոփում է տեղում, ինչի գլխավոր պատճառներից մեկն Էրդողանի նման խարիզմատիկ առաջնորդ չունենալն է: ԺՀԿ-ն այս անգամ էլ տանուլ է տվել իր ներկայիս (Քեմալ Քըլըչդարօղլու) և նախկին (Դենիզ Բայքալ) առաջնորդների հայրենի Թունջելի (հաղթել է ԺԴԿ-ն) և Անթալիա (հաղթել է ԱԶԿ-ն) նահանգներում: ԺՀԿ-ն պարտվել է նաև Էսքիշեհիրում (հաղթել է ԱԶԿ-ն), որն Իզմիրի նման համարվում է նրա «միջնաբերդերից» մեկը: Սպասելիքները չարդարացրեց նաև երբեմնի բավական խոստումնալից համարվող Մուսթաֆա Սարըգյուլը, որը 2014թ. մարտին Թուրքիայում անցկացված ՏԻՄ ընտրություններում ԺՀԿ-ից Ստամբուլի քաղաքապետի թեկնածուն էր (պարտվեց ԱԶԿ թեկնածու Քադիր Թոփբաշին): Սարըգյուլին այս անգամ էլ (նաև հունիսին) չհաջողվեց պատգամավոր ընտրվել Ստամբուլի 2-րդ ընտրատարածքում[11], ուր վերստին պատգամավոր է ընտրվել ԺՀԿ հայազգի թեկնածու Սելինա Դողանը (ԱԶԿ ու ԺԴԿ հայ թեկնածուներ Մարգար Եսայանն ու Գարո Փայլանը նույնպես ընտրվել են պատգամավորներ, ինչպես որ հունիսին էր):

ԺՀԿ կին պատգամավորների թիվը մնացել է նույնը՝ 21: ԺՀԿ-ն Ստամբուլում (28) և Անկարայում (11) պահպանել է իր պատգամավորների թիվը, իսկ Իզմիրում ստացել է 2 մանդատ ավելի: ԺՀԿ-ն պատգամավորական մեկական մանդատ է ստացել Արդահանում, Նիղդեում ու Թունջելիում, ուր նախորդ դեպքում չէր ստացել այն: 35 նահանգում պատգամավորական որևէ մանդատ չստանալը վկայում է, որ ԺՀԿ-ին իրականում դժվար է անվանել ողջ Թուրքիայի մասշտաբով կուսակցություն, և որ նրա հիմնական ընտրազանգվածը շարունակում են մնալ Էգեյան, ինչպես նաև Սև և Միջերկրական ծովերին սահմանակից մի շարք նահանգներ, և որ իրականում նման կարգավիճակի արժանի է միայն ԱԶԿ-ն, որն ընդամենը 3 նահանգում չի կարողացել ձեռք բերել պատգամավորական մանդատ. Թունջելի, Շըրնաք և Հաքքարի (*PKK*-ի հետ, թերևս, ամենակատաղի բախումները գրանցվում են հենց այս 3

[11] Mustafa Sarıgül'e bir şok daha!, Internet Haber, 01.11.2015.

նահանգներում)։ Նոյեմբերի 1-ի ընտրությունները վկայեցին, որ ԺՀԿ-ն շատ անելիքներ ունի հետագայում՝ ԱԶԿ-ի հետ մրցակցել կարողանալու համար։ ԺՀԿ վարկանիշը, մասնավորապես, բավական ցածր է քրդաբնակ նահանգներում, ինչում իր ուրույն դերն ունի պատմական անցյալը՝ միակուսակցական համակարգի (1923-1946թթ.) ժամանակ քրդերի հանդեպ Թուրքիայի իշխանությունների դաժան վերաբերմունքը։

Ազգայնական շարժում կուսակցություն (ԱՇԿ) – 2015թ. Թուրքիայում անցկացված խորհրդարանական երկու ընտրություններում ԱՇԿ համեմատական արդյունքները (տե՛ս *Աղյուսակ 5*).

Աղյուսակ 5

ԱՇԿ	07.06	01.11
Ստացած քվեներ	7.520.006	5.691.737
Ողջ քվեներում մասնաբաժին (%)	16.29	11.90
Պատգամավորական մանդատներ	80	40
Հաղթած նահանգներ	1	0
Պատգամավոր չստացած նահանգներ	34	57

Նոյեմբերի 1-ի ընտրությունների արդյունքներով հիմնական պարտված քաղաքական ուժն ԱՇԿ-ն է, որը կորցրեց մանդատների կեսը՝ 40, և դա այն դեպքում, երբ ընդամենը 5 ամիս առաջ դրանց թիվն ավելացրել էր գրեթե 30-ով՝ 2011թ. խորհրդարանական ընտրությունների համեմատ։ ԱՇԿ-ն այս անգամ չի հաղթել որևէ նահանգում և անգամ Օսմանիեում (հաղթել է ԱԶԿ-ն), որը հունիսի 7-ի ընտրություններում միակ նահանգն էր, ուր հաղթել է ԱՇԿ-ն, և որտեղից սերում է Դևլեթ Բահչելին։ Դա վկայում է, որ նվազել է նաև Բահչելիի վարկանիշը։ ԱՇԿ-ն քվեների քանակական անկում է գրանցել Թուրքիայի 81 նահանգից 80-ում, և միայն Արդահանի նահանգում են ավելացել նրա քվեները։ ԱՇԿ-ն այս անգամ ստացել է 1.8 մլն քվե պակաս։ ԱՇԿ-ն քվեների խոշոր կորուստներ է կրել Ներքին Անատոլիայում, այսպես կոչված Սելջուկյան սուլթանության տարածքում (Նիղդե, Նևշեհիր, Քայսերի, Քըրշեհիր, Թոքաթ, Յոզգաթ, Չորում)։ Կտրուկ աճել է այն նահանգների թիվը (34-ից 57-ի), որոնցում չի կարողացել ստանալ գեթ մեկ մանդատ։ Եթե ԱՇԿ-ն հինգ ամիս առաջ մեկական մանդատ էր ձեռք բերել հետևյալ 9 նահանգում՝ Բայբուրթ, Գիրեսուն, Քըրքքալե, Գյումուշհանե, Ուշաք, Քըրշեհիր, Նևշեհիր, Բուրդուր, Աք-

սարայ, ապա այս անգամ նա մանդատ չի ստացել դրանցում: ԱՇԿ կին պատգամավորների թիվը 4-ից նվազել է 3-ի:

Նոյեմբերի 1-ի ընտրությունները հանգեցրել են նաև նրան, որ ԱՇԿ-ն զրկվել է Թուրքիայի խորհրդարանի փոխնախագահի պաշտոնից: Թուրքիայի խորհրդարանն ունի 4 փոխնախագահ, որոնք բաժին են ընկնում խորհրդարանում ամենաշատ ներկայացված ուժերին: Եթե խորհրդարան անցած ուժերից մեկը ստանում է պատգամավորական մանդատների կեսից ավելին, ապա փոխնախագահի 4 պաշտոններից երկուսը բաժին է ընկնում հենց նրան, իսկ մնացյալ երկուսը՝ 2-րդ և 3-րդ տեղը զբաղեցրած կուսակցություններին: Սա նշանակում է, որ խորհրդարանի փոխնախագահի պաշտոններից 2-ը բաժին է ընկել ԱԶԿ-ին, և որ մեկական փոխնախագահ կունենան ԺՀԿ-ն ու ԺԴԿ-ն (մինչդեռ հունիսի 7-ի ընտրություններից հետո խորհրդարան մուտք գործած նույն չորս ուժերն ունեին մեկական փոխնախագահ)[12]:

ԱՇԿ հունիսյան հաջողությունը հիմնականում իրականացվել էր ԱԶԿ հաշվին, որը, սակայն, այս անգամ կարողացավ հետ բերել կորցրածը: Պատճառներից մեկն այն է, որ հունիսի 7-ի ընտրություններից հետո ԱԶԿ-ն որդեգրել էր շատ ավելի ագրեսիվ ու ազգայնական կեցվածք, քան ԱՇԿ-ն: Դրա հետ կապված՝ թուրք փորձագետ Ումուր Թալուն նկատել է, որ *PKK* հարցում ԱՇԿ-ն խոսում է, իսկ ԱԶԿ-ն՝ ռմբակոծում[13]: Մինչդեռ սովորական դեպքերում կատարվում է ճիշտ հակառակը, երբ Թուրքիան հայտնվում է ծանր վիճակում, խիստ դիրքերից հանդես եկող ԱՇԿ-ն հայտնվում է շահեկան դիրքերում:

ԱՇԿ խոշոր ձախողման հարցում մեծ դեր խաղաց հունիսի 7-ի ընտրություններից հետո նրա կեցվածքը, երբ ձախողեց կոալիցիոն կառավարություն ձևավորելը: Չնայած ԺՀԿ-ն կոալիցիոն կառավարություն ձևավորելու հարցով դիմել էր ԱՇԿ-ին և անգամ Դնլեթ Բահչելիին առաջարկել էր երկրի վարչապետի պաշտոնը[14], սակայն ԱՇԿ-ն մերժել էր այն՝ այդ առաջարկը որակելով որպես «քաղաքական կաշառք»[15]: ԱՇԿ-ին մեղադրում են նաև ԱԶԿ-ի հետ կոալիցիա չձևավորելու համար. ԱՇԿ-ն դեմ է կառավարման նախագահական համակարգին անցում կատարելուն ու (քրդերի հետ) «կարգավորման գործընթացը» շարունակելուն: Ակնառու էր նաև այն, որ ԱՇԿ-ն ունակ չէ

[12] MHP'nin vekil sayısı düştü, TBMM Başkan vekilliği de gitti, Hürriyet, 04.11.2015.
[13] Umur Talu, Evdeki yüzde elli yine eldeki yüzde 50!, Haber Türk, 02.11.2015.
[14] Bahçeli'ye tarihî çağrı: Hükümeti birlikte kuralım, başbakan sen ol, Zaman, 20.06.2015.
[15] Devlet Bahçeli'den Kılıçdaroğlu'nun teklifine net cevap, Sabah, 20.06.2015.

կոալիցիա կազմել ԺԴԿ-ի հետ: Արդյունքում՝ շատերը չներեցին ԱՇԿ-ին և ընտրեցին ազգայնական կեցվածքով նրան մոտ գտնվող ԱԶԿ-ին:

ԱՇԿ-ին մեծ հարված հասցրեց նաև այն, որ կուսակցության հիմնադիր Ալփարսլան Թյուրքեշի որդին՝ Թուղրուլ Թյուրքեշը, օգոստոսի վերջին ընդունեց ԱԶԿ առաջարկը և դարձավ Թուրքիայի ժամանակավոր կառավարության փոխվարչապետ, որով Թյուրքեշ ազգանունը Թուրքիայի կառավարությունում վերստին հայտնվեց 37 տարի և 8 ամիս անց (Թուրքիայի փոխվարչապետի պաշտոնում Ալփարսլան Թյուրքեշի պաշտոնավարությունն ավարտվել է 1978թ. հունվարի 5-ին): Արդեն սեպտեմբերի սկզբին նրան հեռացրին ԱՇԿ-ից, իսկ օրեր անց Թյուրքեշը դարձավ Անկարայում ԱԶԿ պատգամավորական թեկնածու և արդյունքում ընտրվեց պատգամավոր (հունիսյան ընտրություններում Թյուրքեշը ԱՇԿ-ից պատգամավոր էր ընտրվել Անկարա 1 ընտրատարածքում, ուր ԱՇԿ-ն նոյեմբերյան ընտրություններում ստացավ 1 մանդատ պակաս): Դրանով իսկ ԱՇԿ-ն Թուրքիայի խորհրդարանում դարձավ 4-րդ խոշոր ուժը՝ 3-րդ հորիզոնականը զիջելով ԺԴԿ-ին[16] (2 կուսակցություններն էլ հունիսի 7-ի արդյունքներով խորհրդարանում ստացել էին 80 մանդատ, բայց քանի որ ԱՇԿ-ն ստացել էր ավելի շատ քվեներ, ճանաչվել էր երրորդը):

ԱՇԿ-ն սխալներ գործեց նաև ընտրացուցակներ կազմելիս (նոյեմբերի 1-ի ընտրություններում առաջատար 4 կուսակցություններն իրենց ընտրացուցակներում կատարել են 48 փոփոխություն, որոնցից 5-ը բաժին է ընկել ԱԶԿ-ին, 13-ը՝ ԺՀԿ-ին, 12-ը՝ ԱՇԿ-ին, իսկ 18-ը՝ ԺԴԿ-ին[17]): Նոր ցուցակներում տեղ չգտան մի շարք հայտնի գործիչներ և, մասնավորապես, Թուրքիայի ներքին գործերի նախկին (1996-1997թթ.) նախարար, 2001թ. աշնանից՝ ԱՇԿ անդամ, հայտնի հայատյաց[18] Մերալ Աքշեները, որի անունը շրջանառվում է նաև ԱԶԿ հիմնադիրների թվում, որն այն ժամանակ հիասթափվելով Էրդողանից՝ միացել է ԱՇԿ-ին: Չնայած Աքշեները հունիսի 7-ի ընտրություններում ԱՇԿ պատգամավոր էր դարձել Ստամբուլի 3-րդ ընտրատարածքում (ուր, ի դեպ, ԱՇԿ-ն նոյեմբերյան ընտրություններում ստացավ մեկ մանդատ պակաս)՝ Աքշեների անունն այս անգամ տեղ չգտավ ԱՇԿ ընտրացուցակում, ինչը որակվեց որպես խոշոր անակնկալ և «քաղաքական երկրաշարժ»: Դա առավել ուշագավ

[16] HDP Meclis'te resmen 3. Parti, Vatan, 06.09.2015.
[17] Dört parti toplam 48 adayı değiştirdi, Milliyet, 30.09.2015.
[18] 1997թ. Թուրքիայի խորհրդարանում *PKK* առաջնորդ Աբդուլա Օջալանին անվանել է «Հայի սերունդ», ապա «ներողություն է խնդրել» դրա համար՝ ընդգծելով, որ «նկատի է ունեցել ոչ թե Թուրքիայում ապրող հայերին, այլ ընդհանրապես Հայկական ռասային»:

էր նրա համար, որ Աքշեները դրանից առաջ մերժել էր ժամանակավոր կառավարությունում տեղ զբաղեցնելու մասին Դավութօղլուի հրավերը: Թեև ԱՇԿ-ն հայտարարել է, որ հատուկ որևէ պատճառ չկա Աքշեներին ընտրացուցակներում չընդգրկելու համար, այնուամենայնիվ, թուրքական մամուլում նա ներկայացվում է որպես ԱՇԿ նախագահի պոտենցիալ թեկնածու, ինչն էլ դարձել է Բահչելիի տվյալ քայլի դրդապատճառը[19]:

Ամեն դեպքում Աքշեներին ԱՇԿ ընտրացուցակում չընդգրկելը կարելի է անակնկալ համարել մասնակիորեն, եթե հաշվի առնենք, որ հունիսյան ընտրություններից հետո ԱՇԿ-ից Թուրքիայի խորհրդարանի նախագահի թեկնածու դարձավ ոչ թե դրան հավակնող Աքշեները, այլ 2014թ. օգոստոսին Թուրքիայի նախագահական ընտրություններում ԱՇԿ ու ԺՀԿ միասնական թեկնածու Էքմելեդդին Իհսանօղլուն, որը չկարողացավ հաջողության հասնել նաև այս անգամ (նա հունիսյան ընտրությունների նման ԱՇԿ-ից պատգամավոր է ընտրվել Ստամբուլի 2-րդ ընտրատարածքում): Ի դեպ, հունիսյան ընտրություններից հետո Աքշեները չդարձավ նաև ԱՇԿ-ից Թուրքիայի խորհրդարանի փոխնախագահ՝ չնայած այդ պաշտոնը զբաղեցրել է 2007թ. և 2011թ. խորհրդարանական ընտրություններից հետո: Բահչելին այդ պաշտոնը վստահեց հունիսին Տրապիզոնից ընտրված պատգամավոր Քորայ Այդընին, որը, սակայն, այս անգամ չի կարողացել ընտրվել պատգամավոր: Նրանից բացի, պատգամավոր չեն կարողացել ընտրվել նաև ԱՇԿ «ծանր հրետանի» համարվող ԱՇԿ փոխնախագահներ Սադիր Դուրմազը (Յոզգաթ), Ռուհսար Դեմիրելը (Էսքիշեհիր), Կենտրոնական բանկի նախկին նախագահ Դուրմուշ Յըլմազը (Ուշաք) և այլք[20]: Հատկանշական է, որ բոլոր 4 դեպքերում էլ ԱՇԿ-ն որևէ մանդատ չի ստացել այդ 4 նահանգներում:

Մերալ Աքշեների նման մի իրավիճակ էլ տիրում է մեկ այլ հայտնի հայատյաց, *TÜRKSAM* միջազգային հարաբերությունների ու ռազմավարական հետազոտությունների կենտրոնի հիմնադիր և նախագահ Սինան Օղանի պարագայում, որի անունը նույնպես շրջանառվում է Բահչելիին փոխարինողների թվում (ԱՇԿ նախագահի ընտրություններն անցկացվելու են 2017թ.), և որը վերջին շրջանում աչքի էր ընկնում Բահչելիին կտրուկ քննադատելով: Սինան Օղանն ԱՇԿ շարքերից հեռացվեց օգոստոսի վերջին՝ կուսակցության

[19] MHP neden Meral Akşener'i neden aday göstermedi?, Sabah, 19.09.2015.
[20] MHP'de Koray Aydın şoku, Milliyet, 02.11.2015.

կանոնադրության մի շարք կետերը խախտելու համար: Սակայն Օղանին հաջողվեց նոյեմբերի սկզբին դատարանի օգնությամբ վերադառնալ կուսակցության շարքերը[21]: Բահչելին հունիսի 7-ի ընտրություններից առաջ Սինան Օղանին չէր ընդգրկել ԱՇԿ ընտրացուցակում, ինչը հանգեցրել էր նրան, որ ԱՇԿ-ն պարտվեց Իգդիրի նահանգում, որտեղից սերում է Օղանը և որում ԱՇԿ-ն հաղթել էր 2011թ. ընտրություններում՝ հավաքելով քվեների 34%-ը: Հունիսի 7-ին ԱՇԿ-ն (առանց Օղանի) Իգդիրում հավաքեց քվեների 26%-ը, իսկ նոյեմբերի 1-ին (երբ Օղանն արդեն հեռացվել էր ԱՇԿ-ից)՝ 12%-ը, երկու դեպքում էլ չստանալով պատգամավորական մանդատ[22]: Մինչդեռ ԱՇԿ-ն 2011թ. ընտրություններում հաղթել էր միմիայն Իգդիրի նահանգում: Սինան Օղանն արդեն հայտարարել է, որ եթե իրեն ընտրեն ԱՇԿ նախագահ, ապա մեծ փոփոխություններ կկատարի կուսակցությունում, և ԱՇԿ 2019թ. խորհրդարանական ընտրություններում կհավաքի քվեների 25-30%-ը, իսկ 2023թ. (ԹՀ հիմնադրման 100-ամյակ) ընտրություններում՝ 40%-ը և կստանա միակուսակցական կառավարություն[23]:

Այդպիսով, Դևլեթ Բահչելիի փառասիրության, անզիջումության, սխալների, անհեռատեսության պատճառով ԱՇԿ-ն զրկվեց հունիսյան տպավորիչ արդյունքներից, որոնք լավագույնն էին Բահչելիի գլխավորած ժամանակներում (1997-ից): ԱՇԿ-ում Բահչելիի «դարաշրջանը» մոտեցել է ավարտին, և նրա հեռանալը ստացվեց անփառունակ, մինչդեռ կարող էր լինել բավական բարձր նոտայով:

Ժողովուրդների դեմոկրատական կուսակցություն (ԺԴԿ) – Ներկայացնենք 2015թ. Թուրքիայում անցկացված խորհրդարանական երկու ընտրություններում ԺԴԿ համեմատական արդյունքները (տե՛ս *Աղյուսակ 6*).

Աղյուսակ 6

ԺԴԿ	07.06	01.11
Ստացած քվեներ	6.058.489	5.145.688
Ողջ քվեներում մասնաբաժին (%)	13.12	10.76
Պատգամավորական մանդատներ	80	59
Հաղթած նահանգներ	14	12
Պատգամավոր չստացած նահանգներ	54	59

[21] Sinan Oğan MHP'ye geri döndü, Hürriyet, 02.11.2015.
[22] Sinan Oğan gitti Iğdır bitti!, Milliyet, 02.11.2015.
[23] MHP'de Sinan Oğan aday olacak, Sözcü, 10.11.2015.

Նոյեմբերի 1-ի ընտրություններում ԺԴԿ-ն հավաքեց գրեթե 1 միլիոն քվե պակաս, ինչն էլ նրա պատգամավորների թիվը նվազեցրեց 21-ով: Չնայած դրան՝ ԺԴԿ-ն արդեն բուն ընտրությունների և ոչ թե հետագա զարգացումների շնորհիվ դարձավ Թուրքիայի խորհրդարանում ներկայացված 3-րդ ուժը, ինչի կապակցությամբ թուրքական մամուլը գրեց, որ ԺԴԿ համանախագահ Սելահաթթին Դեմիրթաշը խորհրդարանում կնստի Բահչելիի տեղը[24]: ԺԴԿ կին պատգամավորների թիվը 32-ից նվազել է 23-ի: ԺԴԿ-ն այս անգամ պարտվել է Կարսի և Արդահանի նահանգներում՝ զիջելով ԱԶԿ-ին: Ընտրություններից հետո Դեմիրթաշը հայտարարեց, որ իշխանությունների ճնշումների պատճառով այս անգամ չեն անցկացրել լավ ընտրարշավ, մյուս խոշոր կուսակցությունների համեմատ գտնվել են ամենավատ պայմաններում և ընտրաշեմի հաղթահարումն ու խորհրդարանական երրորդ ուժ դառնալը համարում են հաղթանակ՝ չնայած 1 մլն քվե կորցնելուն: Դեմիրթաշը հիշեցրել է, որ հունիսի 7-ին հաջորդած 5 ամիսներին տարբեր վայրերում հարձակման են ենթարկվել ԺԴԿ բազմաթիվ գրասենյակներ, կալանքի տակ են վերցվել կուսակցության մոտ 500 անդամներ ու ղեկավարներ, քրդաբնակ նահանգներում մղվել են ռազմական գործողություններ, որոնք խանգարել են կուսակցական գործունեությանը և միտված են եղել իրենց կողմից ընտրաշեմը հաղթահարել չկարողանալուն[25]:

Բանն այն է, որ եթե անգամ ԱԶԿ-ական թեկնածուները քրդաբնակ (և այլ) նահանգներում ստացած քվեների թվով զիջեին ԺԴԿ-ական թեկնածուներին և զբաղեցնեին 2-րդ տեղը, ապա միևնույն է՝ հենց նրանք կճանաչվեին հաղթողներ ու կդառնային պատգամավորներ, քանի որ ԺԴԿ-ն ընդհանուր առմամբ հաղթահարած չէր լինի ընտրաշեմը և, հետևաբար, ներկայացված չէր լինի խորհրդարանում: Նոյեմբերի 1-ի երեկոյան թուրքական մամուլը գրեց, որ եթե ԺԴԿ-ն չհաղթահարի ընտրաշեմը, ապա ԱԶԿ-ն կստանա հավելյալ 51, ԺՀԿ-ն՝ 4, իսկ ԱՇԿ-ն՝ 2 մանդատ[26]: Սա հաստատում է այն, որ քրդաբնակ նահանգներում հիմնական պայքարը ծավալվել է ԺԴԿ-ի ու ԱՇԿ-ի միջև: Բացի այդ, ստացվում է, որ եթե ԺԴԿ-ն չհաղթահարեր ընտրաշեմը, ապա ԱԶԿ-ն ոչ միայն կստանար 330, այլև՝ 367 մանդատ (խորհրդարանի 2/3-ը,

[24] Bahçeli koltuğunu Demirtaş'a kaptırdı!, Sabah, 03.11.2015.
[25] Demirtaş'tan 1 Kasım seçimleri açıklaması, Posta, 01.11.2015.
[26] HDP barajı geçemezse hangi parti kaç vekil fazla çıkaracak?, Milliyet, 01.11.2015.

317+51), ինչին նա երբևէ չի հասել և ինչը նրան հնարավորություն կտար սեփական ուժերով քվեարկության դնել ու հաստատել նոր սահմանադրության նախագիծը (ինչպես նաև յուրաքանչյուր այլ օրինագիծ)։

Հարկ է նշել, որ հունիսի 7-ի ընտրություններից առաջ Դեմիրթաշը և ԺԴԿ-ն չեն գտնվել նման ճնշման տակ, ինչը կապված էր իշխանությունների կողմից նրանց թերագնահատելու հետ։ Այս անգամ ԱԶԿ-ն ուղղեց իր այդ «սխալը», և Դեմիրթաշին ու նրա կուսակցությանը պահեց մեծ ճնշման տակ։ Մասնավորապես, *PKK*-ի հետ բախումների վերսկսվելուց հետո Դեմիրթաշը քանիցս մեղադրվեց *PKK*-ի հետ կապեր ունենալու համար, անգամ հաղորդվեց, որ Հյուսիսային Իրաքում ավիահարվածի ժամանակ սպանվել է նրա եղբայրը։ Դեմիրթաշը հարկադրված եղավ հայտարարել, որ ինքը *PKK* առաջնորդը չէ, և *PKK*-ին կոչ արեց դադարեցնել գործողությունները, սակայն *PKK*-ից նրան խորհուրդ տվեցին զբաղվել սեփական գործերով։ Այդպիսով, նա հայտնվել էր երկու քարի արանքում։ *PKK* առաջնորդներից Ջեմիլ Բայրքը նոյեմբերի 1-ի ընտրություններից հետո անգամ հայտարարեց, որ եթե չլիներ *PKK*-ն, ապա ԺԴԿ-ն չէր հավաքի անգամ քվեների 5%-ը, և որ ԺԴԿ-ի կողմից նման արդյունք գրանցելն իրենց ձեռքբերումն է[27]։

ԺԴԿ-ի վրա բացասաբար են ազդել նաև քրդաբնակ նահանգներում՝ փողոցներում ու պողոտաներում բարիկադներ կառուցելը, փոսեր փորելը, պարետային ժամերի սահմանումները (տարբեր ժամկետներով փողոց դուրս գալու արգելքներ)։ Այդ ամենի պատճառով միայն Դիարբեքիրում ԺԴԿ-ից ԱԶԿ-ին անցել է 60.000 քվե, որն այս անգամ Դիարբեքիրում ստացել է 1 պատգամավոր ավելի՝ ի վնաս ԺԴԿ-ի[28]։ Այստեղ պետք է հիշատակել այն, որ նոյեմբերի 1-ին թուրք զինվորականները քվեարկության գնացող հարյուրավոր ավտոմեքենաների համար ժամերով փակել են Դիարբեքիր-Լիջե ավտոճանապարհը՝ դա պատճառաբանելով ճանապարհին «ականի առկայությամբ» և սակրավորների «աշխատանքով»[29]։

Եվ վերջապես, ինչպես հունիսյան, այնպես էլ նոյեմբերյան ընտրություններում ԺԴԿ-ն մի շարք նահանգներում հաղթել (պատգամավորական մանդատ է ստացել) կամ պարտվել է մի քանի հարյուր կամ դրանից մի փոքր

[27] Cemil Bayık: Biz olmasak HDP yüzde 5 bile alamazdı, Cumhuriyet, 05.11.2015.
[28] Hendekler HDP'ye oy kaybettirdi, Doğan Haber Ajansı, 03.11.2015.
[29] Asker Lice yolunu seçmene kapattı, Dicle Haber Ajansı, 01.11.2015.

ավելի ձայների տարբերությամբ, ինչը նշանակում է, որ հունիսյան ընտրություններում նմանատիպ ընտրատարածքում հաղթելը չի տալիս նոյեմբերյան ընտրություններում նոր հաղթանակի երաշխիք և ընդհակառակը: Դա նաև ընդգծում է տվյալ նահանգներում կուսակցությունների միջև պայքարի թեժ բնույթը: Օրինակ, Մերսինի նահանգում ԺԴԿ-ն միայն մի քանի տասնյակ քվեի տարբերությամբ է մեկ պատգամավորական մանդատ զիջել ԺՀԿ-ին: Նախնական արդյունքները վկայել են, որ ԺԴԿ-ն ԺՀԿ-ից հետ է մնացել 98 քվեով, և երբ ԺԴԿ-ն բողոքարկել է և կատարվել է քվեների վերահաշվարկ, վավեր է ճանաչվել ԺԴԿ օգտին քվեարկած և անվավեր ճանաչված 56 քվեաթերթիկ: Այդպիսով, ԺԴԿ-ն Մերսինի նահանգում ԺՀԿ-ին պատգամավորական մանդատ է զիջել ընդամենը 42 քվե քիչ ստանալու պատճառով[30]:

Ընդհանուր առմամբ, կարելի է միայն մասնակիորեն համաձայնել Դեմիրթաշի հետ, որ ստեղծված պայմաններում ԺԴԿ գրանցած արդյունքը հաղթանակ է, քանի որ դեռ սեպտեմբերին հաղորդվում էր, որ ԺԴԿ-ն նպատակադրվել է նոյեմբերի 1-ին հավաքել քվեների 15-17%-ը և իր մանդատների թիվը հասցնել 110-ի (այժմ նա ունի դրա մոտ կեսը)[31]: Այո՛, ԺԴԿ-ն այժմ Թուրքիայի խորհրդարանի 3-րդ խոշոր ուժն է, սակայն դա ունի ավելի շատ հոգեբանական ազդեցություն, եթե հաշվի առնենք, որ ԱՇԿ-ից Թուղրուլ Թուրքեշի հեռացվելուց հետո ԺԴԿ-ն դարձել էր խորհրդարանի 3-րդ խոշոր ուժը: Բացի այդ, ԺԴԿ-ն այս անգամ էլ կունենա խորհրդարանի միայն մեկ փոխնախագահ: Մինչդեռ 21 մանդատի պակասը զգալի կորուստ է, որը կարող է էական դեր խաղալ խորհրդարանում օրինագծերի քվեարկության ժամանակ:

Ամփոփելով նոյեմբերի 1-ի ընտրությունները՝ նշենք, որ այժմ ԱԶԿ-ն պետք է գոնե ժամանակավորապես փորձի հաստատել ընտրողների համար այդքան երկար սպասված կայունությունը, հակառակ դեպքում կտրուկ կմեծանա նրանց հիասթափությունը, և նրանք խաբված կզգան իրենց: Սակայն դա չափազանց բարդ խնդիր է վերոնշյալ պատճառներով (*PKK*, ԻՊ, հնարավոր է նաև՝ *PYD* (Սիրիայի քրդեր): Մյուս կողմից էլ կայունության հաստատմանը կարող է նպաստել այն, որ այժմ Թուրքիայում հաստատվելու է ընտրական դադար մինչև 2019թ. (եթե չհաշվենք հնարավոր հանրաքվեն), երբ Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ մեկ տարում կանցկացվի միանգա-

[30] Mersin'de HDP 42 oyla ikinci vekili kaybetti, En Son Haber, 05.11.2015.
[31] 7 Haziran'da barajı geçen HDP, 1 Kasım'da 110 milletvekili istiyor, T24, 04.09.2015.

մից 3 ընտրություն՝ ՏԻՄ, խորհրդարանական ու նախագահական: Այժմ Էրդողանի համար մեծ բարդություն չպետք է ներկայացնի նոր սահմանադրության նախագիծը խորհրդարանում քվեարկության դնելու հարցը, և եթե այն չընդունվի խորհրդարանի կողմից, ապա երկրի նախագահը կարող է այն դնել հանրաքվեի: ԱԶԿ-ն արդեն 2 անգամ (21.10.2007 և 12.09.2010) հանրաքվեի միջոցով կարողացել է սահմանադրական մասշտաբային փոփոխություններ մտցնել ներկայիս «ռազմական» սահմանադրությունում, որն ընդունվել է 1982թ., այսինքն՝ 1980թ. ռազմական հեղաշրջումից հետո: Նոր սահմանադրության նախագծի ընդունմանը կարող է նպաստել այն, որ դա չի վերաբերելու միայն կառավարման նախագահական համակարգին անցում կատարելուն, և շատ այլ կետերով ցանկալի կլինի ընդդիմադիր ուժերի համար: Նոյեմբերի 1-ի ընտրությունները պետք է դաս հանդիսանան ընդդիմության համար, որն արմատական քայլեր չձեռնարկելու դեպքում դեռ երկար ժամանակ չի կարողանա կանգնեցնել ԱԶԿ հաղթարշավը երկրի ներսում:

Ներկայացնում ենք Թուրքիայի 85 ընտրատարածքներում կուսակցությունների արդյունքները (պատգամավորական մանդատները) հունիսի 7-ին ու նոյեմբերի 1-ին[32]:

Աղյուսակ 7

	Նահանգ	Ընդ.	ԱԶԿ		ԺՀԿ		ԱՇԿ		ԺԴԿ	
			07.06	01.11	07.06	01.11	07.06	01.11	07.06	01.11
1.	Ադանա	14	5	6	4	4	3	3	2	1
2.	Ադիյաման	5	4	4	0	0	0	0	1	1
3.	Աֆյոնքարահիսար	5	3	3	1	1	1	1	0	0
4.	Աղրը	4	0	1	0	0	0	0	4	3
5.	Աքսարայ	3	2	3	0	0	1	0	0	0
6.	Ամասիա	3	2	2	1	1	0	0	0	0
7.	Անկարա 1	18	7	8	7	7	3	2	1	1
8.	Անկարա 2	14	8	8	4	4	2	2	0	0
9.	Անթալիա	14	5	7	5	5	3	2	1	0
10.	Արդահան	2	1	1	0	1	0	0	1	0

[32] Թեև Թուրքիան ունի 81 նահանգ, Ստամբուլի նահանգը բաժանված է 3, իսկ Անկարայի ու Իզմիրի նահանգները՝ երկուական ընտրատարածքի, ինչը կապված է նրանց մեծաթիվ բնակչության և քվեների հաշվարկը հեշտացնելու հետ:

	Նահանգ	Ընդ.	ԱԶԿ		ԺՀԿ		ԱՇԿ		ԺԴԿ	
			07.06	01.11	07.06	01.11	07.06	01.11	07.06	01.11
11.	Արտվին	2	1	1	1	1	0	0	0	0
12.	Այդրն	7	2	3	4	3	1	1	0	0
13.	Բալըքեսիր	8	3	4	3	3	2	1	0	0
14.	Բարթրն	2	1	1	1	1	0	0	0	0
15.	Բաթման	4	1	1	0	0	0	0	3	3
16.	Բայբուրթ	2	1	2	0	0	1	0	0	0
17.	Բիլեջիք	2	1	1	1	1	0	0	0	0
18.	Բինգյոլ	3	2	2	0	0	0	0	1	1
19.	Բիթլիս	3	1	1	0	0	0	0	2	2
20.	Բոլու	3	2	2	1	1	0	0	0	0
21.	Բուրդուր	3	1	2	1	1	1	0	0	0
22.	Բուրսա	18	9	11	5	5	3	2	1	0
23.	Չանաքքալե	4	1	2	2	2	1	0	0	0
24.	Չանքըրը	2	2	2	0	0	0	0	0	0
25.	Չորում	4	3	3	1	1	0	0	0	0
26.	Դենիզլի	7	3	4	3	2	1	1	0	0
27.	Դիարբեքիր	11	1	2	0	0	0	0	10	9
28.	Դյուզջե	3	3	3	0	0	0	0	0	0
29.	Էդիրնե	3	1	1	2	2	0	0	0	0
30.	Էյլազըղ	4	3	4	0	0	1	0	0	0
31.	Էրզինջան	2	1	2	1	0	0	0	0	0
32.	Էրզրում	6	4	5	0	0	1	1	1	0
33.	Էսքիշեհիր	6	2	3	3	3	1	0	0	0
34.	Գազիանթեփ	12	6	8	2	2	2	1	2	1
35.	Գիրեսուն	4	2	3	1	1	1	0	0	0
36.	Գյումուշհանե	2	1	2	0	0	1	0	0	0
37.	Հաքքարի	3	0	0	0	0	0	0	3	3
38.	Հաթայ	10	5	5	4	4	1	1	0	0
39.	Իգդիր	2	0	1	0	0	0	0	2	1
40.	Սպարտա	4	2	2	1	1	1	1	0	0
41.	Ստամբուլ 1	31	14	16	11	11	3	2	3	2

	Նահանգ	Ընդ.	ԱԶԿ		ԺՀԿ		ԱՇԿ		ԺԴԿ	
			07.06	01.11	07.06	01.11	07.06	01.11	07.06	01.11
42.	Ստամբուլ 2	26	12	14	8	8	3	2	3	2
43.	Ստամբուլ 3	31	13	16	9	9	4	3	5	3
44.	Իզմիր 1	13	4	4	6	7	2	1	1	1
45.	Իզմիր 2	13	4	4	6	7	2	1	1	1
46.	Քահրաման-մարաշ	8	6	7	0	0	2	1	0	0
47.	Քարաբյուք	2	1	2	0	0	1	0	0	0
48.	Քարաման	2	2	2	0	0	0	0	0	0
49.	Կարս	3	1	2	0	0	0	0	2	1
50.	Քասթամոնու	3	2	3	0	0	1	0	0	0
51.	Քայսերի	9	5	7	1	1	3	1	0	0
52.	Քիլիս	2	1	2	0	0	1	0	0	0
53.	Քըրքքալե	3	2	3	0	0	1	0	0	0
54.	Քըրքլարելի	3	1	1	2	2	0	0	0	0
55.	Քըրշեհիր	2	1	2	0	0	1	0	0	0
56.	Քոջաելի	11	6	7	3	3	1	1	1	0
57.	Քոնիա	14	11	12	1	1	2	1	0	0
58.	Քութահիա	4	3	4	0	0	1	0	0	0
59.	Մալաթիա	6	5	5	1	1	0	0	0	0
60.	Մանիսա	9	4	5	3	3	2	1	0	0
61.	Մերսին	11	3	4	3	4	3	2	2	1
62.	Մուղլա	6	2	2	3	3	1	1	0	0
63.	Մուշ	3	1	1	0	0	0	0	2	2
64.	Նևշեհիր	3	2	3	0	0	1	0	0	0
65.	Նիդդե	3	2	2	0	1	1	0	0	0
66.	Օրդու	5	3	4	2	1	0	0	0	0
67.	Օսմանիե	4	2	2	0	0	2	2	0	0
68.	Ռիզե	3	3	3	0	0	0	0	0	0
69.	Սաքարիա	7	5	5	1	1	1	1	0	0
70.	Սամսուն	9	5	6	2	2	2	1	0	0
71.	Շանլըուրֆա	12	7	9	0	0	0	0	5	3
72.	Սիիրթ	3	1	1	0	0	0	0	2	2

	Նահանգ	Ընդ.	ԱԶԿ		ԺՀԿ		ԱՇԿ		ԺԴԿ	
			07.06	01.11	07.06	01.11	07.06	01.11	07.06	01.11
73.	Սինոպ	2	1	1	1	1	0	0	0	0
74.	Շրինաք	4	0	0	0	0	0	0	4	4
75.	Սվազ	5	3	4	1	1	1	0	0	0
76.	Թեքիրդաղ	6	2	3	3	3	1	0	0	0
77.	Թոքաթ	5	3	4	1	1	1	0	0	0
78.	Տրապիզոն	6	4	5	1	1	1	0	0	0
79.	Թունջելի	2	0	0	0	1	0	0	2	1
80.	Ուշաք	3	1	2	1	1	1	0	0	0
81.	Վան	8	1	2	0	0	0	0	7	6
82.	Յալովա	2	1	1	1	1	0	0	0	0
83.	Յոզգաթ	4	3	4	0	0	1	0	0	0
84.	Զոնգուլդակ	5	2	3	2	2	1	0	0	0
85.	Մարդին	6	1	2	0	0	0	0	5	4
	Ընդհանուր	550	258	317	132	134	80	40	80	59